ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 փետրվարի 2015թ. թիվ 36-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի ԹԻՎ 152-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.24 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի մարտի 28-ի թիվ 617-Ա և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2014 թվականի ապրիլի 1-ի թիվ 5-Ա «Նախազորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների շրջանում կանխարգելիչ պատվաստումների իրականացման կարգը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինկոմիսարիատներին կցագրված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» համատեղ հրամանը և ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի փետրվարի 5-ի «Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի ամառային զորակոչի ենթակա անձանց շրջանում կանխարգելիչ պատվաստումների իրականացման մասին» թիվ 185–Ա հրամանը՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2014 թվականի ապրիլի 23-ի թիվ 152-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման թիվ 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Որոշման թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս.Լամբարյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. փետրվարի 18
ք.Վանաձոր